

ՄԵԼԳՈՆՆԵԱՆԻ Պարագան

Մինչ սփիւռքի մեկ այլ համայնքին մեջ, ի գին մեծ զոհողութիւններու նոր վարժարան մը իր դռները լայն կը բանայ, ինս Կիպրոսի մեջ, տասնամեակներու կեանք ու ներդրում ուսեցած մեկ այլ հաստատութիւն փակուելու վտանգին առշեւ կը գտնուի: Եւ այս՝ ոչ թէ աշակերտի կամ նիւթականի պակասեն, այլ գուտ շահադիտական ու շուկայական նկատառումներով:

Մենք չենք ուզեր ՀԲԸՇի կեդրոնական մարմիններու հաւանական քայլերուն թեր ու դեմ արտայատութիւններու յորձանուտին մեջ մխրճուիլ: Այլ կ'ուզենք անդրադառնալ հարցի մեկ այլ երեսին, որ կը թուի անտեսուած ըլլալ թէ՛ պատասխանատուներու, եւ թէ հանրութեան կողմէ:

Կիպրական պետութիւնը, Եւրոպիութեան հանդէպ ստանձնած պարտաւորութիւնները գործադրելու իր ճիգին մեջ, մեծագումար նպաստներ տուաւ Մելգոննեանին, որպեսզի երկրի հայ փոքրամասնութեան նոր սերունդը ծրի, ու մայրենի լեզուով երկրորդական ուսում ստանալու իր իրաւունքը կարենայ իրագործել: Որպէս համայնքի միակ հայկական երկրորդական վարժարանի պատասխանատուն, Մելգոննեանի հոգաբարձութիւնը ատենին մեծ հրճուանքով ընդունեց պետութեան կողմէ ընծայուող այս պատին ու օժանդակութիւնը, որու հետեւանքով կիպրահայ աշակերտութեան թիւը վերջին տարիներուն յաւելում կրեց:

Այս պարտաւորութենէն ու պատասխանատուութենէն, ՀԲԸՇը իրաւունք չուսի ինքզինք ձերբազատելու: Պետութեան եւ գաղութին հանդէպ ստանձնուած այս պարտաւորութիւնը կարելի չէ թեթեւօրէն լուծարքի ենթարկել տնտեսական պատճառաբանութիւններով:

Մեր թերթին, ու ևաեւ կողիի դաշնակցական ընտանիքին անունով կը յայտնենք թէ Մելգոննեանը փակելու որեւէ մտածում՝ սխալ, ու կիպրահայ համայնքի շահերուն դեմ ուղղուած կը նկատենք: Մենք կը հաւատանք որ հայ դպրոցը պետք չէ փակէ իր դռները, կը հաւատանք որ Մելգոննեանը գոցուելու պարագային, այս գաղութը իր հայեցի նկարագրի պահպանման պայքարին մեջ ծանր ու անփոխարինելի կորուստ մը պիտի կրէ: